ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 ապրիլի 2025թ. թիվ 173-Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՂՈՒՐՍԱԼԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի ԹԻՎ 189-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով և «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հավելվածի 2.5 բաժնի 6-րդ կետի 2-րդ տողը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի թիվ 1392-Ն որոշման 6-րդ կետը և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հունվարի 20-ի թիվ 17-Ն հրամանը, «ՀՀ Լոռու մարզի Ղուրսալի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մանկավարժական խորհրդի 02.04.2025թ. թիվ 8, ծնողական խորհրդի 03.04.2025թ. թիվ 4 և «ՀՀ Լոռու մարզի Նոր Խաչակապի միջնակարգ դպրոց», «ՀՀ Լոռու մարզի Քարաձորի հիմնական դպրոց», «ՀՀ Լոռու մարզի Ղուրսալի միջնակարգ դպրոց», «ՀՀ Լոռու մարզի Արևաշողի միջնակարգ դպրոց», «ՀՀ Լոռու մարզի Շենավանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ների կառավարման միասնական խորհրդի 03.04.2025թ. թիվ 5 նիստերի արձանագրությունները՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ղուրսալի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը անվանափոխել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արջհովիտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն անունով:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2002 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 189-Ա որոշման թիվ 130 հավելվածով հաստատված կանոնադրության մեջ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ղուրսալի

միջնակարգ դպրոց» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արջհովիտի միջնակարգ դպրոց» բառերով:

3. Հաստատել կանոնադրության փոփոխությունը:

4. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ղուրսալի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Ա.Միքայելյանին՝

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ղուրսալի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրության փոփոխությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ սահմանված կարգով պետական գրանցում իրականացնելու նպատակով:

X

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

2025թ. ապրիլի 4
ք.Վանաձոր

Հաստատված է
ՀՀ Լոռու մարզպետի
2025թ. ապրիլի 4-ի
թիվ 173-Ա որոշմամբ

Կազմված է «___» _____2025թ.
Բաղկացած է 1 էջից
Տպագրված է ընդամենը 2 օրինակ
Օրինակ _____

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ՍՊԻՏԱԿԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ
ԿՈՂՄԻՑ 24.01.2003թ.
ԳՐԱՆՑՄԱՆ N 90.210.00379
ՀՎՀՀ 06802702
_____ ԳՐԱՆՑՎԱԾ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ԹԻՎ _____ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱՆՑՎԵԼ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

«____» _____ 2025թ.

_____ _____

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

/ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ/

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՂՈՒՐՍԱԼԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ղուրսալի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

կանոնադրության մեջ բոլոր տեղերում, բոլոր հոլովաձևերով և բոլոր լեզուներով «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ղուրսալի միջնակարգ դպրոց» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արջհովիտի միջնակարգ դպրոց» բառերով:

Սույն փոփոխությունը հանդիսանում է _____ գրանցված «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ղուրսալի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրության անբաժանելի մասը: